«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ՍԱՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Դաստիարակ՝ ԱՆՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Մանկապարտեզ՝ «ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԲՌՆԱԿՈԹ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ» **ՀՈԱԿ**

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն---------- 3

Գլուխ 1. Տեսական մաս

1.1 Հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը նախադպրոցական տարիքի երեխաների համար---------- 5

1.2 Նախադպրոցականներին հայրենասիրական ոգով դաստիրակելու կետերը- 6

1.3 Հայրենաճանաչողության ուսուցման դաստիարակչական նշանակությունը

Գլուխ 2 Գործնական մաս---------- 11

Եզրակացություն---------- 13

Դիտարկում, Եզրակացություն---------- 14

Օգտագործված գրականության ցանկ---------- 16

Հավելված---------- 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Չկա ավելի խոր զգացում,

քան հայրենասիրությունը:

Պարույր Սևակ

Հայրենասիրությունը սկսվում է հայրենաճանաչողությունից:Հայրենաճանաչողության դաստիարակելը այսօրվա կարևորագույն խնդիրներից մեկն է: Նախադպրոցական տարիքի երեխաների հայրենասիրական դաստիարակության գործընթացը անհրաժեշտ է սկսել նախադպրոցական հաստատություններում, որի հիման վրա էլ կձևավորվի նրանց հայրենաճանաչողությունը: Սերմանելով սեր հայրենիքի, քաղաքի, հայրենի բնության հանդեպ, ծանոթացնելով երկրի մշակույթին և պատմությանը՝ յուրաքանչյուր երեխա յուրովի է ընկալում իրեն շրջապատող միջավայրը: Այդ պատճառով էլ հայրենաճանաչողության ուսուցումը պետք է սկսել հայրենասիրական զգացմունքների ուսուցմամբ: Հայրենաճանաչողությունը բարոյական և հայրենասիրական կրթություն է: Հայրենաճանաչողության արժեքային համակարգի ձևավորումը պետք է դրվի ընտանիքում և մանկապարտեզում:

<<Ես կարծում եմ, որ մեր ազգի նկարագիրը պահելու և հայրենիքին տեր կանգնելու հիմքում ընկած է հայրենաճանաչողությունը>>: Անհատն այնքանով է տեր կանգնում իր հայրենիքին, որքանով ճանաչում է այն և այդ ճանաչողությունն է իր հետ բերում կապվածություն, սեր և նվիրում դեպի հայրենիք:

Նպատակը. երեխաների մեջ զարգացնել ազգային արժեքներ, գիտակից և պատասխանատու անհատ, ապագայում ճանաչեն ու սիրեն իրենց հայրենիքը:

Խնդիրները .

. ուսումնասիրել քննարկվող հարցի վերաբերյալ մասնագիտական գրականություն

. հիմնավորել հայրենաճանաչողության ուսուցման դաստիարակչական նշանակությունը. Մեր հայրենիքի խորհրդանիշների՝ դրոշի, զինանշանի և օրհներգի միջոցով ուսումնասիրել և ճանաչել հայրենիքը;

Արդիականությունը. պայմանավորվում է նրանով, որ հենց հայրենիքի համար պայքարին, հայրենիքին, հայրենիքի պաշտպան հերոսներին, զինվորներին ու բանակին նվիրված ազգային ազատագրական, ժողովրդական ռազմի ու զինվորի երգերն են ազդում կրթվող սերունդների հայրենասիրական դաստիարակության գործընթացի արդյունավետության վրա, նրանց տալիս բարոյական բարձր ուղենիշներ և նպաստում ազգային արժեհամակարգի ձևավորմանը:

Գլուխ 1

1.1 ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՁԵԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հայրենասիրության պատմական աղբյուրը դարերով ու հազարամյակներով առանձին պետությունների գոյատևումն է որոշակի վայրում, ինչի արդյունքում ձևավորվում է կապվածություն հայրենի հողին, լեզվին ու ավանդույթներին, այն ներառում է ազգայնականությանը հատուկ մի շարք եզրույթներ: Ազգերի կազմավորման ու ազգային պետությունների ստեղծման պայմաններում հայրենասիրությունը դառնում է հասարակական գիտակցության բաղադրիչ մաս XVIII դարում:

Այլ անձանց վերագրելով հայրենասիրական զգացմունքներ, իսկ որոշ իրադարձությունների տալով հայրենասիրական նրբերանգ՝ բնութագրող անձը դրանով հաճախ տալիս է դրական գնահատական: Այն հակադրելի է ունիվերսալիզմից առաջ եկած աշխարհաքաղաքացիության հոսանքին, որը ենթադրում է համամարդկային շահի գերակայում նեղ ազգային կամ էթնիկ շահից]:

Հայրենասիրության մասին պատկերացումները կապված են հայրենիքի նկատմամբ սիրո հետ, սակայն հայրենասիրության էության վերաբերյալ պատկերացումները տարբեր մարդկանց մոտ տարբեր են: Այդ պատճառով էլ ոմանք իրենց համարում են հայրենասեր, մյուսները՝ ոչ:

Հայրենասիրություն, բարոյական և դիվանագիտական սկզբունք, հասարակական զգացողություն, որի իմաստը սերն է հայրենիքի նկատմամբ և պատրաստություն ստորադրել նրա համար սեփական շահերը: Հայրենասիրությունը ենթադրում է հպարտություն Հայրենիքի նվաճումների հանդեպ: Հայրենասիրությունը ենթադրում է ազգային շահերի պաշտպանում, կապվածություն սեփական հողին, սեր դեպի հայրենիքի մշակույթը և սեփական լեզուն:

1.2 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՈԳՈՎ ԴԱՍՏԻՐԱԿԵԼՈՒ ԿԵՏԵՐԸ

Հայրենաճանաչողության դաստիարակությունը դաստիարակների և սաների միջև մի գործընթաց է, որն ուղղված է հայրենասիրական զգացմունքների զարգացմանը: Սրա նպատակն է կրթել հայրենասեր անձ, ով սիրում է իր հայրենիքը, հավատարիմ է հայրենիքին, պատրաստ է ծառայել և պաշտպանել հայրենիքը: Երեխաների հայրենաճանաչողության դաստիարակությունը նախադպրոցական ուսումնական հաստատության հիմնական խնդիրներից է:

Այս ուղղությամբ գոյություն ունի մեթոդաբանական գրականություն: Դրա հիման վրա կրթական աշխատանքի այս ուղղությամբ կարելի է առանձնացնել առաջադրանքների մի ամբողջ համալիրը:

- Երեխայի սերը բարձրացնել իր ընտանիքի, տան, մանկապարտեզի, քաղաքի կամ գյուղի. փողոցի նկատմամբ:
- Երեխաների իմացություն իր արմատների մասին: Երեխաների ծանոթացում քաղաքի պատմությանը և ենթակառույցներին:
- Երեխաների ծանոթացում պետության խորհրդանիշներին դրոշ, զինանշան, օրհներգ:
- Այցելել մշակութային վայրեր՝ հուշարձաններ, թանգարաններ:

Այս խնդիրները լուծվում են երեխաների գործունեության բոլոր տեսակներում խմբասենյակում, խաղերում, առօրյա կյանքում:Դրանք երեխայի մեջ դաստիարակում են հայրենաճանաչողություն:

Երեխայի հայրենաճանաչողության դաստիարակությունը մանկավարժական բարդ

գործընթաց է: Այն հիմնված է հայրենասիրության՝ որպես անհատական որակի ձևավորման վրա:

Յուրաքանչյուր տարիքային փուլում հայրենաճանաչողություն և հայրենասիրական դաստիարակության դրսևորումներն ունեն իրենց առանձնահատկությունները

Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մոտ հայրենասիրությունը սերմանելու նպատակն է ձևավորել նրանց բարի գործեր և արարքներ կատարելու անհրաժեշտություն:

Երեխաների հայրենաճանաչողություն ասելով հասկանում ենք մեծահասակի և երեխաների փոխգործակցությունը համատեղ գործունեության և հաղորդակցության մեջ ,որն ուղղված է երեխայի մեջ մարդու համընդհանուր բարոյական որակների բացահայտմանն ու ձևավորմանը:

Դաստիարակի աշխարհայացքը, նրա անձնական օրինակը, դատողությունները, ակտիվ կյանքի դիրքը դաստիարակության ամենաարդյունավետ գործոններն են: Եթե ուզում ենք, որ մեր երեխաները սիրեն իրենց երկիրը ,իրենց քաղաքը պետք է նրանց ցույց տանք գրավիչ կողմից: Բայց չափահասի ոչ մի գիտելիք արդյունք չի տա, եթե նա ինքը չի սիրում իր երկիրը, իր քաղաքը, իր ժողովրդին: Երեխայի հայրենաճանաչողությունն ու հայրենիքի հանդեպ սիրո զգացումը սկսվում է ամենամոտ մարդկանց' հոր, մոր, տատիկի, պապիկի հանդեպ սիրուց:

Եվ տունը, բակը, որտեղ նա մեկից ավելի քայլել է, տեսարանը բնակարանների և մանկապարտեզի պատուհաններից, որտեղ նա ուրախություն է ստանում իր հասակակիցների հետ շփվելուց, և իր հայրենի բնությունը' այս ամենը Հայրենիքն է:

1.3 ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախադպրոցական տարիքը երեխայի անհատականության զարգացման շրջանն է: Մտածելով հայրենասիրական զգացմունքների ծագման մասին նրանք միշտ դիմում են մանկության տպավորություններին: Հենց այս շրջանը նպաստավոր է հայրենասիրական զգացմունքների դաստիարակման համար: Հայրենասիրության զգացումը պետք է լինի գիտակցված ու ուժեղ: Հետաքրքրություն առաջացնել երեխայի մոտ հայրենի հողի, հայրենիքի հանդեպ սիրո զգացողության ձևավորում՝ հայրենի մշակույթին և ավանդույթներին ծանոթանալու համար:

Ժամանակակից հանրակրթարանի խնդիրներից է երեխաներին ծանոթացնել հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգությանը, նպաստել երեխաների հայրենասիրական դաստիարակությանը: Այն տեղի է ունենում նաև երաժշտության ուսուցման գործընթացում հայրենասիրական կատարողականությունը ուսուցանելիս: Այս ժողովրդական երգերի ուսուցման նշանակությունը և կարևորությունը, վերջիններս օժտված են երեխայի արժեհամակարգի ձևավորման և նրանց մեջ հայրենասիրություն դաստիարակելու հսկայական ներուժով:

Մեր հայրենիքի խորհրդանիշները

Պետական դրոշը որոշակի գույնի (գույների) ու չափի պաստառ է՝ ամրացված սրածայր ձողի վրա: Դրոշը գործածվել է դեռևս Հին աշխարհի երկրներում՝ առավելապես ռազմական նպատակներով՝ որպես զինվորների հավաքի ու համախմբվելու, հեռվից լավ տեսանելի նշան:

«ՀՀ պետական դրոշի մասին» ՀՀ օրենքով (15. 06. 2006) Հայաստանի Հանրապետության դրոշը Հայաստանի առաջին հանրապետության (1918–20 թթ.) եռագույն դրոշն է՝ կարմիր, կապույտ, նարնջագույն հորիզոնական հավասար շերտերով՝ լայնության և երկարության 1:2 հարաբերությամբ:

Կարմիրը խորհրդանշում է հայ ժողովրդի մշտական պայքարը՝ հարատևման, Հայկական բարձրավանդակի, քրիստոնեական հավատի, Հայաստանի անկախության և ազատության համար, կապույտը՝ ապրելու կամքը խաղաղ երկնքի ներքո, նարնջագույնը՝ հայ ժողովրդի արարչական տաղանդն ու աշխատասիրությունը:

Պետական դրոշը բարձրացվում է հանրապետությունում մարզական պաշտոնական առաջնությունների բացման և իջեցվում փակման արարողությունների ժամանակ, բարձրացվում է նաև հայ մարզիկներին միջազգային մրցումներում մրցանակային պարգևներ հանձնելիս:

Պետական զինանշան

Պետական զինանշանը խորհրդանշում է երկրի հասարակական-քաղաքական կարգը: Զինանշանների սաղմերն ի հայտ են եկել նախնադարյան հասարակարգում, առկա են նաև Հին աշխարհի ժողովուրդների բազմաթիվ խորհրդանշային պատկերներում: Վաղ անցյալում ազնվականական կամ իշխանական տները, երբեմն նաև առանձին անձեր, պետության կազմի մեջ մտնող վարչատարածքային միավորներ նույնպես ունեցել են իրենց զինանշանները:

«ՀՀ պետական զինանշանի մասին» ՀՀ օրենքով (15. 06. 2006) Հայաստանի Հանրապետության զինանշանը Հայաստանի առաջին հանրապետության զինանշանն է: Հեղինակներն են ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը և նկարիչ Հակոբ Կոջոյանը:

Զինանշանի կենտրոնում՝ վահանի վրա, պատկերված են Արարատ լեռը՝ Նոյյան տապանով, և պատմական Հայաստանի 4 թագավորությունների՝ Բագրատունիների (վերևից՝ ձախ), Արշակունիների (վերևից՝ աջ), Արտաշիսյանների (ներքևից՝ ձախ), Ռուբինյանների (ներքևից՝ աջ) զինանշանները: Վահանը պահում են արծիվը (ձախից) և առյուծը (աջից), իսկ վահանից ներքև պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա ու ժապավեն:

Պետական օրհներգ

Պետական օրհներգը հանդիսավոր երաժշտական ստեղծագործություն է՝ գրված ծրագրային բնույթի բանաստեղծության խոսքերով:

«ՀՀ պետական օրհներգի մասին» ՀՀ օրենքով (25.12.2006) Հայաստանի Հանրապետության օրհներգը Հայաստանի առաջին հանրապետության օրհներգն է՝ «Մեր հայրենիքը» (խոսքը՝ որոշ փոփոխություններով, Միքայել Նալբանդյանի, երաժշտությունը՝ Բարսեղ Կանաչյանի):

Պետական օրհներգը պարտադիր հնչում է պաշտոնական հանդիսությունների ժամանակ պետական դրոշը բարձրացնելիս, նորընտիր նախագահի երդման արարողության, Ազգային ժողովի նստաշրջանների, հանրապետությունում անցկացվող զորահանդեսների, միջազգային և համապետական մարզական մրցումների պաշտոնական բացման ու փակման, միջազգային մրցաշարերում մրցանակային տեղեր գրաված մարզիկներին պարգևների հանձնման հանդիսավոր արարողությունների ժամանակ, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում: Երբ հնչում է պետական օրհներգը, ներկաները ոտքի են կանգնում և դեմքով շրջվում դեպի պետական դրոշը, տղամարդիկ հանում են գլխարկները:

ԳԼՈՒԽ2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

Թեման- Իմ հայրենիքը Հայաստանն է : Պարապմունքի տեսակը ՝ զրույց (2-3) պարապմունքի ընթացքում:

Նպատակը- Ծանոթացնել և իրազեկոլ հայրենիքի քարտեզի , ՀՀ դրոշի, զինանշանի, օրհներգի մասին:

Զարգացնել- Երեխաների կապակցված խոսքը, հաղորդակցումը, մտքերիփոխանակումը:

Տեսակ՝ Զրույց

Խնդիրներ՝

- Երեխաներին ծանոթացնել Հայաստանի քարտեզին, ՀՀ զինանշանին, դրոշին, ընդհանրացնել տարվա ընթացքում երեխաների ստացած տեղեկությունները մեր երկրի հայտնի վայրերի մասին: Դաստիարակել սիրո և հպարտության զգացում:
- Զարգացնել երեխաների խոսքը
- Պարապմունքների ժամանակ ստացած գիտելիքների հիման վրա երեխաներին սովորեցնել հյուսել կապակցված փոքրիկ պատմություններ՝ առաջարկվող թեմայի շուրջ, ամրապնդել հարցերին պատասխանելու նրանց ունակությունը, մասնակցել զրույցին:
- Շարունակել աշխատանքը ստեղծագործական բովանդակությունն առանց բացթողման պատմելու, արտահայտիչ խոսք կառուցելու կորողությունների ձևավորման շուրջ:
- Հարստացնել երեխաների բառապաշարը, սովորեցնել խոսքի մեջ գործածել ածականներ և դրանք համակցել գոյականների հետ:

Անհրաժեշտ պարագաներ՝

ՀՀ քարտեզը, դրոշը, զինանշանը, օրհներգը, նկարներ Հայաստանի քաղաքների և գյուղերի մասին:

Պարապմունքի ընթացքը

Բանաստեղծություն Հայրենիքի մասին, ունկնդրման և քննարկման համար:

Զրույց բանաստեղծության բովանդակության շուրջ.

- Ինչի մասին է հեղինակը պատմում բանաստեղծության մեջ;
- Ինչ է նշանակում Հայաստան բառը մեր բոլորի համար:
- Ինչպես են անվանում մեր հանրապետությունը:
- Եկեք քարտեզի վրա ցույց տանք Հայաստանի տարածքը:
- Ուշադիր դիտեք քարտեզը և որոշեք՝ որ գույներն են գերիշխում Հայաստանի տարածքում:

Ֆիզկուլտ դադար

Երեխաները կանգնում են շրջանաձև և կատարում են բանաստեղծության բովանդակությանը համապատասխան շարժումներ:

Զրույց ՀՀ խորհրդանիշների մասին

Դաստիարակ.

- Երեխաներ, յուրաքանչյուր հանրապետություն ունի երեք տարբերակիչ, իրեն բնորոշ նշան՝դրոշը, զինանշանը և հիմներգը:

Եկեք երգենք կարմիր, կապույտ, ծիրանագույն երգը, մեր դրոշի մասին:Մեկնաբանենք դրոշի գույների նշանակությունը:Ցուցադրենք դրոշը, որը ավելի տեսանելի է դարձնում պարապմունքը:

Խաղ ՝ գրատախտակին փակցնել մի քանի երկրների դրոշները և զինանշանները:

- Երեխաներ գտեք մեր հայրենիքը ներկայացնող նշանները և ներկայացրեք:

Վերջում լսել <<ՀՀ ՕՐՀՆԵՐԳԸ>>:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, կատարելով հետազոտական աշխատանք«Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը» թեմայի շրջանակներում հանգեցի հետևյալ եզրակացությանը.

- ✓ Խիստ կարևոր և անհրաժեշտ է դեռ նախադպրոցական տարիքից սկսած երեխաների մոտ դաստիարակել սեր և հոգատար վերաբերմունք հայրենի երկրի նկատմամբ,
- ✓ Ձևավորել և ամրապնդել գիտելիքներ պետական տոների և խորհրդանիշների մասին,
- ✓ Երեխաները պետք է ստանան նախնական գիտելիքներ հայոց բանակի, զինվորների մասին, որոնք պաշտպանում են մեր հայրենիքը:
- ✓ Երեխաների մեջ ձևավորել սեր հայրենի երկրի նկատմամբ, նպաստել հայրենաճանաչողության ձևավորմանը, որը անկասկած կտա իր պտուղները:

ԴԻՏԱՐԿՈՒՄ, ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դիտարկում. Պարապմունքի պլանավորումը համապատասխանում է տարիքային խմբի ծրագրին:Ընտրված անհրաժեշտ պարագաները, նկարները նույնպես համապատասխանեցված են պարապմունքին: Պարապմունքի տեսակը՝ զրույց: Դաստիարակի խոսքը հստակ է, մատչելի, գրական, ձայնային տեմբրը մեղմ: Պարապմունքը տարվել է ԽԻԿ համակարգով, պահպանվել է տևողությունը:

Կիրառվել է մեթոդներ, հնարներ .հարցադրում, վերապատմում, խաղային մեթոդներ, ոտանավորի ուսուցում, նկարների միջոցով պատմում:

Դաստիարակը կարողացավ հասնել պարապմունքի նպատակին՝ ըստ որի անհրաժեշտ է երեխաներին տալ գիտելիքներ հայրենիքի, հայկական բանակի ստեղծման մասին, դաստիարակել հպարտության զգացում, զարգացնել ստեղծագործական միտքը, կապակցված խոսքը, հարստացնել բառապաշարը, երեխաներին խանութացնել ՀՀ քարտեզին, դրոշին և զինանշանին:

Եվ, որ ամենակարևորն էր՝ պարապմունքի ավարտին երեխաները կարողացան պարապմունքի ընթացքում ստացած գիտելիքների շնորհիվ հյուսել կապակցված խոսք՝ փոքրիկ պատմություններ ներկայացնելով:

Եզրակացություն.Պարապմունքի ընթացքում երեխաները ունկնդրեցին հայրենասիրական բանաստեղծություն, երաժշտություն, երգեր և կիրառվեց ֆիզկուլտ դադար:Երեխաները ոգևորված էին, շատ ակտիվ, հայրենասիրական ոգով տրամադրությամբ, ընդգրկված էին բոլոր երեխաները, կատարվեց նաև ենթախմբային աշխատանքներ:

Պարապմունքի ընթացքում կատարվեց ուսումնասիրություն՝ <<Հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը>> թեմայով: Կարծում եմ կիրառված մեթոդների միջոցով որոշակիորեն գիտելիքներ փոխանցվեց երեխաներին՝ հայրենաճանաչողության բոլոր զգայարանների միջոցով՝ հոգի, սիրտ, միտք եռամիասնության մշտական կիրառմամբ:

Առաջարկություն .Ելնելով նշվածից՝ առաջ են եկել հետևյալ առաջարկությունները

- Մենք պետք է օգտագործենք բոլոր տեսակի բանահյուսությունները՝ հեքիաթներ, ասացվածքներ, երգեր, տաղեր, պարեր:
- Շրջապատող առարկաներ, որոնք առաջին անգամ են արթնացնում երեխայի հոգին, նրա մեջ գեղեցկության զգացումը, հետաքրքրություն են սերմանում, պետք է լինեն ազգային: Սա օգնում է երեխաներին վաղ տարիքից հասկանալ, որ նրանք հայ ժողովրդի մի մասնիկն են:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Zatsepina M. B. «Ռազմական փառքի օրեր. Նախադպրոցականների հայրենասիրական դաստիարակություն»

2. Դմիտրիևա Ե. Ա. «Հայրենասիրական դաստիարակություն նախադպրոցական ուսումնական հաստատությունում»

3. Bazarova O. B. «Նախադպրոցականների բարոյական և հայրենասիրական դաստիարակություն»

4. Արապովա-Պիսկարևա Ն. «Իմ տունը». Նախադպրոցական տարիքի երեխաների բարոյահայրենասիրական դաստիարակության ծրագիրը.

5. Չիբուխչյան, Լ. Սարգսյան ՝ Մայրենի լեզվի պարապմունք, մանկապարտեզի ավագ խումբ՝ ուսումնամեթոդական ձեռնարկ:

ՀԱՎԵԼՎԱԾ